# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**02.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/46-2 գնման պայմանագրի**

ք. Երևան «09» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ԱՏԵՍ» և «ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերությունները (համատեղ) (այսուհետև՝ Կապալառու), որոնք գործում են համաձայն 04.03.2026 թվականի համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագրի, ի դեմս «ԱՏԵՍ» ՍՊ ընկերության տնօրեն Հ. Մխեյանի և ի դեմս «ԵՐՎԱԴԱ» ՍՊ ընկերության տնօրեն Մ. Մխեյանի, որոնք գործում են Ընկերությունների կանոնադրությունների հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 02.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/46-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.7 կետը և **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

***1.Համաձայնագրի առարկան***

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

**1.1** Պայմանագրով նախատեսված՝ **Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքի և այգու հիմնանորոգման աշխատանքների** կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է 3/երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ԱՏԵՍ» ՍՊԸ | «ԵՐՎԱԴԱ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 10/3 | ք. Երևան, Արցախի փ. 28/15 |
| ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն | «Ամիօբանկ» ՓԲԸ | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900022600424 | Հ/Հ 1150018019729716 | Հ/Հ 1570005353830100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 04438168 | ՀՎՀՀ 02231092 |
| Վ. Պապիկյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ | Հ. Մխեյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ | Մ. Մխեյան ---------------- (ստորագրություն) Կ.Տ |